

րայ կղզին կերթայ իւր առողջութեան համար
օգտօրէնութիւն մը ընելու :

Վերջին հեռագրա-լուրերէն կիմանամք որ
Լիբիական Սիւրիոյ շահագործող հասարակ-
այեանութեան նախագահութեան ընտրուէր է
պարոն Ալլահաճա՛ ինքն :

Աթլիքէն եկած լուրերուն նայելով նա-
խարարները իրենց հրաժարականը տուէր Լ. Ն.
պարոն Օ. Լիւմիս արտաքին գործոց պաշտօնէին
խորհրդատուն նախագահ ընտրուելու համար :

Այս հրաժարականները չեն ընդունուէր ()
թօն թագաւորէն :

Սիւրիոյ Բաշա Բաշա ինքն իրաւունք մէջ ուն-
ական կաշիք լրագրէն քաղած հետեւեալ յօդ-
ուածը կը կարդամք , որ Լիբիական գաւառի
Հայազգեաց զօր կը պատմաբանէ , « Լիբիան է
զանազանել կրնէ նոյն թերթը , այս ժողովրդոց
մէջ երկրին հին բնակիչները ու յետոյ եկող
քաղթականները : Հիմա Լիբիական մէջ շատ
քիչ հայ կայ բնիկ , այն թշնամական չարքն
ու կործանմունքները որ իրենց դժբաղդ հայրի-
նիքն աւերեցին ու քանդեցին՝ պատճառ եղան
իրենց այս վիճակը ինչպէս : Լիբիան ըսել նաեւ
որ երբ հնդկական վաճառականութեան հասու
մը : Կլուս-բարե յուսոյն քաղի սկսաւ՝ նոյն
երկրէն եւս ալ առաւել քաղթականութիւնը
շատցաւ , անանկ որ Հայք գրեթէ բոլորեալ
Լիբիոյ ու Լիբիական երեսը ցրուեցան :

Մոնթիքներն ալ իրենց հետ շատ հայեր տարին
Վիլիոյ եզերքը տիրապետող տեղերնին : Ինչ-
զանդ իրեն կայսերաց ժամանակը ամբողջ գիւ-
ղեր ի փոքր Արիս քաղթեցան , մանաւանդ ի
Կիլիկիա Ռուբիկենաց տիրապետութեան ներքեւ
Եգիպտոսի մէջ ալ այնքան բազմաթիւ է-
ին Հայք որ 1075ին յատուկ եկեղեցական գլուխ
մը ունէին հին : Լիբիոյ տասններորդ և չորեք-
տասներորդ դարոց մէջ ալ շատերը Լիբիոյ
տանի կողմեր գացին : Հազար 331ին Միթրա-
քանի , իրիսի , և Բօլոնիայի մէջ ալ կային ,
Հազար 604 թականին Հաճաքաւ Իսպահա-
նի Լուրի - Նուրի արուարձանը 2000 հայ ըն-
տանեօք լեցուց զորոնք Լիբիական նահանգէն բե-
րած էր : Ժամանակ առ ժամանակ ևս հայ հա-
րուստ վաճառականք Տօնի Թերեքի եզերքը և
ի Զիլիկ կը քաղթէին : Հազար 804ին երբ Զի-

լիան Բիւսնը Լիբիական վարչապետը՝ երկու-
հազար հայ թիֆլիզ քաղթեցին թողլով իրենց
բնակութիւնները , և ահա մինչ ցարդ նոյն
քաղաքը մնացած են Հալապիոյ թաղը ունենա-
լով տեղի բնակութեան :

Այս տեղեկութիւնն է հարկ է հետեւեալ որ
Լիբիական գաւառին մէջ գաւառի հարկը՝ դա-
նազան երկիրներէ քաղթած են զանազան տա-
րիներու մէջ , այս քաղաքին բնակիչներու գալով
քանի մը զիւղերու մէջ կը գտնուին միայն :

Այս ժողովուրդը ուրիշ ու է ժողովուրդ պէս
ու նի իւր բարի ու գէշ յատկութիւնները կրօնի
մասին հայը երկիւղածէ , Լիբիոյ մէջ կա-
րող չէ զայն իւր վարդապետութեան խոտորե-
ցնել , ուր որ ըլլայ կրկնապէս իւր պաշտա-
մունքը բողոքողին , ու բնաւ ետ չի ետք պա-
հեցողութեանէն որ 4 ամիս կրտսէ : Եւս չի սիր
տաճառներ ու վանքեր հիմնել ու իւր կղերին
օգնել : Հայերը ընդհանրաբար աչքաբաց են ,
լաւ կը ճանաչեն գիտութեան և արուեստից
օգտակարութիւնը այս մասին կրգեալանցեն
իսկ իրենց գրացի վրացիները ու թաթարները :
Լիբիոյն ալ իրենց գաւառից կրթութիւնը
զանց չընելու եւսանդեամբ են վառեալ :

Ի մասին երկրագործութեան գրեթէ ազգ մը
չիկայ որ կարենայ հայուն հետ մրցիլ : Մէկ
խօսքով խորագէտ , համբերող ու խնայող ըլ-
լալով լաւ կը նախագիտեն որ և իցէ ձեռնար
կութեան մը հետեւութիւնները :

Այն հայերը որոնք Տաճկաստանէն քաղթած
են՝ յատուկ սովորութիւններ ունին հին հայոց
նման : Գանդաղ են թէ իրենց շարժմանը և թէ
խոտուածքուն մէջ , խորհախոտութիւն չունին ,
շատ կը սիրեն երկրագործութիւնը , արհեստ-
ները ու վաճառականութիւնը , ու չի նայելով
իրենց կարողութեան հիւրընկալ են :

Արշալուսոյ հեռու որ ընթերցողաց համար
բանաւորականութեան մէջ հարկ սեպեցինք ամիւ-
րեւ Տաճկաստանի Հայոց Ազգային Սահմանադ-
րութիւնը , զոր տեսնելով մեր օտար աշխարհի
հայք ուրախանան տեսնելով օգոստոսիայ
Սովետական հոլանաւորութեան ներքեւ ծաղկող
իրենց եղբարքը՝ որ ըստ օրէ լուսաւորութեան
և քաղաքակրթութեան շուրհին մէջ ըրած յա-
ռաջարկութեան քայլերին : Արոնք թէ և
գողգոթուն բայց համաձայն ըլլելով Լիբիոյ

կան արդի քաղաքականութեան ընթացքին
կործանելու վախ չի տար , թէ որ ջանքը յարա-
տեւ , սէրը միշտ , և յոյսը յաւերժական ըլլի :
մանաւանդ առջի ժամանակները քանզի մար-
դու ձգտեցը և ձեռնարկութեանցը մէջ ա-
ռաջին քայլն է տաժանելի :

Յնծաղէ տեսնել մօտ ժամանակներս
Հայ սեւեռին մէջ փայլակնող Ազգութեան սե-
րը առանց խորութեան կրօնի , և ահա այս ըզ-
գացման արդիւնքն է այն գովեստից արժանի
համազգային բարեգործական ընկերութիւնը
զոր յիշած էինք մեր անցեալ թուով : Այս մա-
սին գալով ուրախութեամբ կը տեսնեմք Աւե-
տաբերի 155 թուոյն մէջ հայադէի Բողոքական
յարգեւելայ մը նամակը , որուն մէջ եւսանդեամբ
գովելով վերայիշեալ ընկերութիւնը բողոքական
հայոց ալ նոյնին մանակցիլ կուզէ իրաւամբ :
Այսպիսի նամակները որոնք ժողովրդեան մէջէն
կը ծագին մեծ յայտարար կրնան ըլլալ ազգեր-
նիս ընդդէմ կրօնամեղութեան ընդդէմ ու անոր
տեղ խղճի ազատութիւնը թագաւորելուն , ու
րով միմիայն կարող է ազգ մը անյուսաչի հան-
գըտութեամբ ու անգործութեամբ զարգանալ
մարդկութեան բարոյական և բնական օրինօք :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . 20 ՆՈՅԵՄԻԵՐ

Սաիւ լրագրին 458- թուոյն մէջ հետեւ-
եալ ուրախական տողերը կը կարդամք , « Կայ-
տերական բարեխնամ կառավարութիւնը իւր
սովորական բարձր արդարասիրութեամբ հրա-
ման ըրած էր որ Նիզամիեան մեծապատիւ
Վերտիկ ասիրային հաշիւները ճշգրտութեամբ
վերաքննուին : ուստի վսեմափալ Սուլթան
Օարիֆ փաշային նախագահութեամբ խառն
յանձնաժողով մը կազմեցաւ որ անցեալ շա-
բաթ օրն իր առաջին նիստը ըրաւ Բ . Իւսուրդ :

Այս չքնաղ լրոյն վրայ անտարակոյս Հայ
ժողովուրդը պիտի հրձօնի յիշելով նոյն վե-
ազգաւորէն ընդունուած օգուտն ու բարեքն-
նը : նամանաւանդ ցնծութեամբ պիտի լեց-
ուին այն անձինքը որ անկեղծ բարեկամու-
թեամբ անմոռաց կը պահեն սրտերնուն մէջ
վսեմաշուք ամիրային քաղձը սէրը :

— Հայոց Սարգիս Սրբազան Պատրիարքը ամ-
այս 5 ին ազգիս այցելութեան եկող Գաղղիա

ԿԵՐԻՆՆԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Այսպիսի Ընդհանուր Ժողով

9 . Ազգային ընդհանուր Ժողովը կը բաղիւ-
նայ 220 ազգային երեսփոխաններ որոնցմէ
160-ը Պօլսի Թաղերուն եկեղեցեաց կողմէն ըն-
տրեալ , և 60-ը առաջնորդանիստ գաւառնե-
րուն կողմէն ընտրեալ :

Ընդհանուր Ժողովին մէջ ազգային երեսփո-
խանաց անդամակից են .

Եւրոպայի անդամակից Վարչութեան
անդամներէն՝ Կրօնական ու Քաղաքական Ժող-
ովներուն և չորս Տեսուչ խորհուրդներուն ան-
դամներն ու թաղական խորհուրդներուն ատե-
նապետները :

Այս կարգի անդամաց թիւը իւր 100 է : բայց
այս թիւը երեսփոխանաց թիւին վրայ ճշգրիւ
չկրնար աւելցիլ , փոսն զի ասոնց մէջ ար-
դէն ձերեմիտիական ընտրվածներ ալ կրնան գտ-
նուիլ :

Երկրորդ՝ Ազգին կամ Տերութեան ծառայու-
թեանը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուե-
եալ անձինք որոնց արժանաւորութիւնը Ազգին
կամ Տերութեան կողմէն վկայեալ կը համար-
վի : Ինչպէս են Կեղեցական գասէն՝ Պօլսի գտ-
վող եպիսկոպոսները : Պօլսի եկեղեցեաց քարո-
զիչ վարդապետներն ու աւաքերեցներն : Լի-
սոնական գասէն՝ ազգային մատենագիրներ ,
վկայեալ բժիշկներ , գլխաւոր դասատուներ ,
լրագրապետներ : Քաղաքական գասէն՝ վերին
պաշտօնաւորաց աստիճանակիցներ , արքունի

Ժողովոց անդամներ : Բ . Իւրան գիւններուն
մէջ տնօրէններ և Թարգմանապետներ : ազգ-
ային կամ արքունի հաստատութեանց մէջ տն-
օրէններ : ուսումնապետներ : Օրինաւորական գա-
սէն՝ վերին ըստայից աստիճանակիցներ :

Այս կարգի անդամաց թիւն ալ չըկրնար
ճշգրիտ վերայիշեալ պատճառով , բայց իւր
սկզբունք՝ այս երկու կարգի անդամաց բոլոր-
դակ թիւը երբէք չը պիտի հաւասարի երեսփո-
խանաց թիւին (1) :

10 . Ընդհանուր Ժողովը էն շատը 400 էն
աւելի անդամ չը պիտի ունենայ , և քանի որ
երեսփոխանաց մեծագոյն մասը այսինքն 111-ը
գտնէ ներկայ չըլլայ , նիստ չըպիտի կարենայ ընել :

11 . Ընդհանուր Ժողովին պաշտօնն է՝ Ազգին
կողմէն երեսփոխանութեամբ ազգային բարձր
պաշտօնաւորները ընտրել , ազգային ժողովները
կազմել , անոնց վարչութեանը համարառու ըլլալ ,
և ազգային ծանր կամ ընդհանրական գործերը
վճարաւոր տնօրէնել :

Իւր պարտաւորութիւնն է՝ ազգային Սահմա-
նադրութեան ըսկզբունքները տնխաստ պահել
և անոնց տրամադրութեանցը համեմատ վար-
վիլ :

12 . Ընդհանուր Ժողովը կը գումարուի .
Եւրոպայի կանոնաւորապէս ամեն տարի մարտ ամ-
սին վերջերը ազգային Վարչութեան տարեկան

ընհանուր համարաւորութիւնը մոտիկ ընելու
ազգային ժողովականաց կէօին ընտրութիւնն ը-
նելու և ազգային տարեկան տուրքին տնօրե-
նութիւնը հաստատելու համար : Այն տարե-
կան նիստին մէջ վարչութեան անդամները
տուրքի խնդիրէն զատ՝ միւս խնդիրներուն մէջ
խօսք միայն ունին և ոչ քուէ :

24 . Կաթողիկոսի ընտրութեան մասնակից
ըլլալու համար :

34 . Լիբուսաղէ մայ և Պօլսի Պատրիարքաց ընտ-
րութեանը համար :

44 . Կրօնական ու Քաղաքական Ժողովոց մէջ
կամ Պատրիարքին ու Ժողովոց մէջ պատահած
անհամաձայնութեանց համար : Այն պարագա-
յից մէջ ալ Վարչութեան անդամները խօսք
միայն ունին և ոչ քուէ :

54 . Ազգային սահմանադրութեան վերաքննու-
թեանը համար :

Եւ վերջապէս արտաքոյ կարգի պատա-
հած այնպիսի ծանր խնդիրներու համար չորոնք
ազգային ժողովները Ընհանուր Ժողովով որոշել
հարկաւոր դատեն :

13 . Ընդհանուր Ժողովը կը հրաւիրեն , նախ
պատրիարքը՝ ազգին կողմէն , երկրորդ՝ Ընդ-
հանուր Ժողովին ատենապետը՝ սոյն Ժողովին
գիւններն կողմէն , երկրորդ՝ Կրօնական կամ
Քաղաքական Ժողովին ատենապետները՝ սոյն
Ժողովոց կողմէն :

Այս յօդուածը վերջնական է երբ թէ ազգային և թէ
Տերութեան պաշտօնաւորաց թիւը այն տնօրէն տնեւայ որ
անկողի ըլլայ սոյն համեմատութիւնը պահել :

Շարունակելի

